Օտար լեզվի մասնագիտական որակավորման քննությունն իրականացնում է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի օտար լեզուների ամբիոնի և պրոֆեսորադասախոսական կազմից ձևավորված հանձնաժողովը:

Օտար լեզվի մասնագիտական որակավորման քննությունը գնահատում է ասպիրանտների/հայցորդների՝ օտար լեզվով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողությունները և մասնագիտական նյութի ըմբռնման ունակությունը:

Որակավորման քննության ընթացքում դիմորդը պետք է կարողանա՝

1. բնօրինակից սահուն կարդալ և ընկալել մասնագիտական տեքստ՝ հիմնվելով ուսումնասիրած լեզվական նյութի, երկրագիտական և մասնագիտական գիտելիքների, լեզվական և համատեքստային կանխագուշակումներ կատարելու հմտությունների վրա,

2. օտար լեզվից հայերեն (ռուսերեն, պարսկերեն, և այլն) գրավոր թարգմանել մասնագիտական տեքստ,

3. օտար լեզվով լրահոսից վերարտադրել հասարակական-քաղաքական հոդված կամ տեքստ,

4. հանձնաժողովի անդամների հետ օտար լեզվով քննարկել մասնագիտական և գիտական աշխատանքին առնչվող հարցեր:

Քննությունը բարեհաջող հանձնելու դեպքում դիմորդը հնարավորություն է ստանում ասպիրանտուրայի հաջորդ փուլ անցնելու և գիտական հետազոտությունը շարունակելու համար: